

## ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԶԳԵՍՏԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Ա. ԵՍԱՅԱՆ, Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ

Հասարակության հոգևոր ու նյութական մշակույթի մասին ամբողջական պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է գիտենալ այդ հասարակության ոչ միայն սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքը, այլև ծանոթ լինել նրա կենցաղին, բարոյական շափանիչներին, ճաշակին, կրոնական պատկերացումներին: Թերևս այս և սոցիալական որոշ հարցերի պարզաբանմանը կարող է նպաստել տվյալ ժողովրդի կենցաղում օգտագործված զգեստների քննությունը:

Հագուստի պատմությունը, սակայն, գեռևս քիչ է ուսումնասիրված<sup>1</sup>: Քիչ է ուսումնասիրված և ուրարտական զգեստը, որին նվիրված ամբողջական աշխատություն դեռևս չկա: Նրա առանձին արտահայտություններին տրամադրված են հակիրճ տողեր միայն հնագիտական այս կամ այն նյութը հրատարակելիս: Հայտնի է նաև Ա. Պատրիկի «Հայկական տարազ» աշխատությունը, ուր հեղինակը անդրադարձել է նաև ուրարտացիների զգեստին<sup>2</sup>:

Ուրարտացիների օգտագործած հանդերձի մասին մեր պատկերացումները հիմնված են հնագիտական նյութի (որմնանկարներ, պաշտամունքային թիթեղներ, արձաններ, սաղավարտներ), ինչպես նաև սեպագիր որոշ տվյալների վրա: Հետաքրքիր են նաև պեղումների ժամանակ (հատկապես Կարմիր բլուրում) հայտնաբերված տարբեր նրբության գործվածքների պատառիկներն ու թելերի կծիկները՝ ներկված կարմիր, կապույտ, դեղին գույներով և դրանց նրբեդանգներով<sup>3</sup>, որոնք պատկերացում են տալիս ուրարտացիների օգտագործած կտորների ու նախընտրած գույների մասին. հագուստների դունադարձումը դիտվում է նաև որմնանկարներում և Կարմիր բլուրից հայտնաբերված կարմիր, սև, սպիտակ գույների հանդերձներ կրող փայտե արձանիկների վրա<sup>4</sup>:

Ուրարտացիք հատկապես պատկերել են իրենց աստվածություններին և դիևվորներին: Այդ պատճառով մեր գիտելիքները սրանց օգտագործած զգեստների մասին ավելի կատարյալ են: Հասարակության մյուս խավերը պատկերվել են սակավադեպ և նրանց հագուստը մեզ համեմատաբար քիչ է հայտնի. յուրաքանչյուր զգեստ մեծ մասամբ արտահայտված է մեկական օրինակով:

<sup>1</sup> И. П. Горбачева, К вопросу о происхождении одежды, «Советская этнография», 1950, № 3, էջ 9:

<sup>2</sup> Ա. Պատրիկ, Հայկական տարազ, Երևան, 1966, էջ 17—18: Հեղինակները հայտնում են իրենց շնորհակալությունը ազգագրագետ Ժ. Խաչատրյանին դիտողությունների համար:

<sup>3</sup> А. С. Верховская, Текстильные изделия из раскопок Кармир-блур (տե՛ս Բ. Բ. Пиотровский, Кармир-блур, 3 գրքում, Երևան, 1955), էջ 68:

<sup>4</sup> В. В. Плотровский, Urartu, München—Gen—Paris, 1969, նկ. 127, 128, Բ. Բ. Пиотровский, Кармир-блур (альбом), Л., 1970, աղ. 29, 34:



Ուրարտական աստվածների զգեստը.— Ուրարտացիները աստվածներին երևակայել են հիմնականում մարդակերպ և հագուստներով, որոնք ձևով զրեթե չեն տարբերվել իրենց օգտագործած զգեստներից: Նրանք աստվածներին պատկերել են շքեղ ու ճոխ ասեղնագործված կտորներից կարված շորերով (բաճկոններ, թիկնոցներ, վերնաշապիկներ, գլխի հարդարանքներ և այլն)՝ առավելագույնի հասցնելով մարդու և աստվածությունի միջև եղած արտաքին նմանությունը:

Կարծիք կա, սակայն, որ Ուրարտուի գլխավոր աստված Խալդին ընկալվել և պատկերվել է անդեմ<sup>5</sup>: Մենք չենք վիճարկում այս տեսակետը, քանի որ իսկապես ուրարտական մտածողությունը ծանոթ էր «անընկալելի արարչի» մասին պատկերացմանը և չենք բացառում այդ մտածելակերպի որոշակի ազդեցությունը ուրարտական մշակույթի վրա: Սակայն փաստ է, որ Խալդիի մասին նման պատկերացումը միակը չէր: Նրան ուրարտացիք անվանում էին «արքա»<sup>6</sup>, հայտնի է նաև, որ Խալդիին նվիրվել են մարդկային հագուստներ<sup>7</sup>, և, վերջապես, եթե շկար նրա արձանը Մուսասիրում (ինչպես գտնում է Մ. Ռիմշնայդերը նշված հոդվածում), ապա այն անկասկած եղել է Կիլիբանի երկրի մոտակայքում, որտեղից Ռուսա II-ի օրոք տարվել է Ռուսախիլի<sup>8</sup>: Այսպիսով, Խալդիի մասին կային և ավելի պարզեցված հասկացություններ, որոնցից մեկն էր և նրա մարդակերպությունը:

Բ ա ճ կ ո ն ն եր (պատմուճան).— հանդիպում են երկու ձևի՝ առաջին ձևը կարճաթև է և հասնում է մինչև կրունկները, իրանի մասը գոց է, օձիքը՝ կլոր կամ եռանկյունաձև: Նման հագուստի մի հետաքրքիր օրինակ պահպանվել է էրեբունիի որմնանկարներում: Այստեղ Խալդին<sup>9</sup> ունի երկար բաճկոն՝ ասեղնագործված լայն օձիքով: Փեշերը զարդարված են երկնագույն զոլերով: Վանում գտնված Խալդիի արձանիկը նույնպես նման զգեստ ունի, որը, սակայն, սեղմիրանված է լայն գոտիով<sup>10</sup> (աղ. I, 1):

Սերբարթեպեից հայտնի թիթեղներից<sup>11</sup> մեկի վրա Խալդին պատկերված է ուղիղ կտրվածքի կարճաթև բաճկոնով, որի փեշին ասեղնագործված է եռաշար եղևնազարդ, ավելի վեր՝ թևք գծիկներ (աղ. I, 4): Հաճախ համանման հագուստով է պատկերվում նաև Թեյշեբան. Կարմիր բլուրից գտնված նրա բրոնզե արձանիկը<sup>12</sup> կրում է ազատ կտրվածքի կարճաթև բաճկոն, որի ե-

<sup>5</sup> M. Riemenschneider, Die urartäischen Gottheiten, „Orientalia“, 32, fasc. 2, Roma, 1963, էջ 148; P. Calmeyer, Zur Genese Altiranischer Motive, II, Der leere Wagen, „Archaeologische Mitteilungen aus Iran“, 7, 1974, էջ 54—59; Ն ու յ ն ի՝ Ikonographie und Stil urartäischer Bildwerke. Urartu, ein wiederentdeckter Rivale Assyriens. Katalog der Ausstellung, München, 1976 (այս կառավարող այսուհետև՝ Urartu), էջ 49:

<sup>6</sup> Տե՛ս Ի. Մ. Дьяконов, Урартские письма и документы, Л., 1963 (այսուհետև՝ УПД), № 12, տող 4:

<sup>7</sup> Տե՛ս Ի. Մ. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951, № 2—4 (այսուհետև՝ АВИИУ), 49, 367:

<sup>8</sup> Տե՛ս УПД, № 12, տող 4—5:


<sup>9</sup> Կ. Լ. Оганесян, Арин-Берд I, Երևան, 1961, նկ. 32; Ն ու յ ն ի՝ էրեբունիի որմնանկարները, Երևան, 1973, աղ. 46:

<sup>10</sup> Բ. Բ. Пиотровский, Искусство Урарту, Л., 1962, էջ 81, նկ. 46: Սույն արձանիկը միայն ենթադրարար կարելի է Խալդիին համարել:

<sup>11</sup> Տե՛ս Ի.-Յ. Keilner, Bronzene Weich- und Votivgaben. Urartu, էջ 57, նկ. 54:

<sup>12</sup> Բ. Բ. Пиотровский, Кармир-блур, I, Ереван, 1950, էջ 69, նկ. 41:





Աղ. 1



ոանկյունաձև օձիքի տակից գծագրվում է մեկ այլ հանդերձի բարձրագույն օձիքը: Հագուստը հարգարված է խորանարդաձև զարդանախշով, իսկ քղանցքը՝ ծոպերով: Մուսկուլուրը է նաև ձախ ուսով անցնող լանջագոտին: Այլ ձևվածքի բաճկոններ են կրում Կարմիր բլուրից գտնված Արգիշթի I-ի և Սարգուրի II-ի սաղավարտների վրա պատկերված ոգիները: Առաջին սաղավարտին<sup>13</sup> նրանք դրվագված են 11 կենաց ծառերի երկու կողմերում կանգնած: Բոլորն էլ կրում են լանջագոտիներ ունեցող երկար բաճկոններ (աղ. 1, 7): Մտերից դեպի ձախ կանգնած ոգիների պատմուճանները կարճ, արմունկներին հասնող ու աստիճանաբար լայնացող թևերով են, իսկ աջ կողմում գտնվողների բաճկոնները թևեր չունեն: Նման զգեստներով են ներկայացված նաև Սարգուրի II-ի սաղավարտին<sup>14</sup> պատկերված ոգիները: Սակայն այստեղ նրանց բաճկոնները սեղմիրանված են, իսկ թևերը ասեղնագործված բաղաձառաբ գծիկներով (աղ. 1, 5, 8):

Էրեբունիի Խաղիի տաճարի որմնանկարներում<sup>15</sup> ոգիները կրում են երկար, ազատ կտրվածքի կարմիր բաճկոններ՝ կարճ թևերով ու կլոր օձիքներով, իսկ սյունազարդ դահլիճում պատկերվածներին<sup>16</sup> ավելի սեղմ են, ընդդրվում են իրանը և փեշից վեր թակալակար ունեն: Սրանք հիշեցնում են Ալթինթեփեի որմնանկարներից հայտնի բաճկոնի ձևը<sup>17</sup>, որն իջնում է մինչև կրունկները. թակալակարով զարդարված քղանցքից կախված են ծոպեր: Մուսկուլուրը է նաև իրանը սեղմող լայն ժապավենի ծայրը, որը գցված է ուսի վրա: Պատմուճանների դեղանկար օրինակներ են պատկերված Կարմիր բլուրում գտնված հինգ փայտե արձանիկների վրա: Դրանք հասնում են մինչև կոճերը: Կարճ թևերի եզրերը զարդարված են ծոպերով: Մուսկուլուրով են ավարտվում նաև ասեղնագործ խորանարդիկներով զարդարված փեշերը: Կրծքի վրայով անցնում են կետազարդով լցված երկայնական գծեր: Այս հագուստը գունազարդված է եղել կարմիր, սպիտակ և սև երանգներով:

Բաճկոնների երկրորդ ձևը առաջիններից տարբերվում է փեշերի լայն բացվածքով: Նման հանդերձներ են կրում Կարմիր բլուրից հայտնի բրոնզե մի գոտու վրա պատկերված Խաղի, Թեյշեբան և Շիվինին<sup>18</sup>: Խաղին ունի մինչև կրունկները հասնող, կարճ թևերով և կլոր օձիքով զգեստ, որի իրանի մասը չոց է, իսկ փեշը՝ բաց: Իրանին գծագրվում է կտորից կարված մի լայն գոտի (աղ. 11, 5): Համանման զգեստով է դրվագված նաև Թեյշեբան (պատկերված է ցուլի վրա կանգնած): Միակ տարբերությունն այն է, որ վերջինիս գոտին ավելի նեղ է, իսկ փեշերը զարդարված են եռաշար բլուրածալ թակալակարով (աղ. 11, 3): Շիվինիի բաճկոնը վերոհիշյալներից տարբերվում է թևերի բարդ կտրվածքով (աղ. 11, 2):

Վ եր ն ա շ ա պ ի կ ն ե յ .— Ուրարտացու վերնաշապիկը ուներ զգեստի նշանակություն, որը հասնում էր մինչև ծնկները, երբեմն էլ՝ ծածկում: Վերնաշապիկները բաճկոններից տարբերվում էին իրենց կարճութամբ: Այդպիսի

<sup>13</sup> Б. Б. Пиотровский, Кармир-блур, 2, Ереван, 1952, № 21:

<sup>14</sup> Նույն տեղում, 1, էջ 64—65, նկ. 40—40a:


<sup>15</sup> Կ. Լ. Հովհաննիսյան, Էրեբունիի որմնանկարները, աղ. 48:

<sup>16</sup> Նույն տեղում, աղ. 7:

<sup>17</sup> Նույն տեղում, աղ. 49:

<sup>18</sup> Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, էջ 224—225, նկ. 68—70:





Աղ. II



զգեստով է պատկերված հալդին Սերբարթեփեում գտնված մի բրոնզե թիթեղի վրա<sup>19</sup>։ Հագուստը սեղմ գրկում է իրանը և հասնում ծնկներին։ Թևերը կարծես թե հասնում են մինչև դաստակները, օձիքը լայն է և բարձրադիր, փեշը զարդարված է ծուլերով։ Սերբարթեփեից հայտնի մեկ այլ թիթեղի վրա<sup>20</sup> հալդին պատկերված է նման զգեստով, միայն այստեղ շապիկի թևերը ավելի կարճ են։ Զգեստն ամբողջովին զարդարված է վարդյակներով, փեշերը՝ նաև ծուլերով։ Նույն վայրից գտնված մեկ այլ թիթեղի վրա<sup>21</sup> հալդին կրում է կարճ թևերով, ծնկներին հասնող վերնաշապիկ, որի վրայով անցնում է վարդյակներով զարդանախշված լանջագոտի։ Զգեստը կետագծաղարդ է։ Ճոխ հարդարված այսպիսի մի հանդերձով է պատկերված հալդին Արծկեի բարձրաքանդակի վրա<sup>22</sup>։ Վերնաշապիկի փեշերը հասնում են ծնկներին և ավարտվում հարուստ երիզով։ Օձիքը փոքր կտրվածք ունի։ Հագուստն ամբողջությամբ կարված է խորանարդիկներով և վարդյակներով նախշված գործվածքից (աղ. II, Ը)։ Նույն բարձրաքանդակին պատկերված է նաև Թեյշեբան՝ համանման վերնաշապիկով, սակայն առանց թևերի<sup>23</sup> (աղ. II, 7)։

Արծկեի բարձրաքանդակի նախնական ձևի վերակառուցումը տվել է Ուրսուլա Զայդլը<sup>24</sup>։ Նա գտնում է, որ այդ բարձրաքանդակին ցուլի և առյուծի վրա պատկերված են պահապան ոգիներ և ոչ թե հալդին ու Թեյշեբան։ Նա համամիտ է այն կարծիքին, թե առյուծը և ցուլը աստվածությունը որոշելիս շեն կարող անժխտելի ապացույցներ չեն։ Այս ենթադրությունը և հողվածում այս առումով բերված փաստերը, անկասկած, հետաքրքիր են, սակայն թերևս անբավարար՝ հրաժարվելու համար ընդունված տեսակետից։ Հետաքրքիր է, որ մեզ հայտնի ոգիների ու Արծկեի բարձրաքանդակի այս պատկերների հագուստները հիմնովին տարբերվում են միմյանցից։ Ոգիներին բնորոշ են երկար պատմունձաններն ու կարճ անթևոցիկները, որոնք կարված են ոչ ճոխ կլատորներին։ Արծկեում աստվածությունները կրում են միայն իրենց բնորոշ, ասեղնագործ կարճ վերնաշապիկներ ու երկսր թիկնոցներ, ինչպես և գլխարկներ, որոնք ավարտվում են աստղերով։ Վերջիններս Ուրարտուում, ըստ ասորեստանյան աղբյուրների, աստվածություն էին խորհրդանշում։ Այս առումով հետաքրքիր է, որ աստղը որպես գաղափարագիր Շումերում «աստված» նշանակություն ուներ<sup>25</sup>։ Այդպիսի աստղով էր թագադրված Արգիշթի I-ի արձանը Մուսասիրի տաճարում<sup>26</sup>։ Ուրարտական արքաները, այդ թվում և Արգիշթի I-ը աստվածացվում էին<sup>27</sup>։ Նրանք պիտի համադրվեին ոչ թե ոգիների,

<sup>19</sup> H.-J. Kellner, *Եզդ. աշխ.*, էջ 55, նկ. 47:

<sup>20</sup> Նույն տեղում, նկ. 49:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 57, նկ. 52:

<sup>22</sup> P. Calmeyer, *Ikonographie und Stil urartaischer Bildwerke*, Urartu, էջ 50, նկ. 43:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 51, նկ. 44: Б. Б. Пиотровский, *Искусство Урарту*, էջ 97, նկ. 61: Կ. Լ. Հովհաննիսյան, *Էրեբունիի որմնակարները*, էջ 28, նկ. 5:

<sup>24</sup> U. Seidl, *Torschützende Götter in Urartu*, „*Archaologische Mitteilungen aus Iran*“, 7, 1974.

<sup>25</sup> Г. Чайлд, *Древнейший восток в свете новых раскопок*, М., 1956, էջ 209:

<sup>26</sup> АВИИУ, 49 (367):

<sup>27</sup> «Ուրարտական դիցարանի աստվածությունների մասին», «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 163—164:

այլ ավագ աստվածությունների հետ և Արգիշթի I-ի կրած աստղը պիտի լինեն այդպիսի մի աստվածության խորհրդանիշը, որը և Արծկեի բարձրաքանդակում աստվածությունների գլխազարդն է:

Վերնաշապիկների այլ օրինակներ հայտնի են Մյունխենի հին պատմության թանգարանում պահվող վերոհիշյալ թիթեղների, ինչպես նաև Ադանայի դավառական թանգարանում գտնվող բրոնզե գոտիների վրա դրվագված աստվածությունների պատկերներից<sup>28</sup>, որոնք, սակայն, վերը նկարագրվածներից զրեթև չեն տարբերվում:

Ուրարտացիք օգտագործել են նաև կարճ, մինչև գոտկատեղը հասնող վերնաշապիկներ: Այդպիսի հագուստով է պատկերված Թոփրակկալեից հայտնի՝ մարդու գլխով և իրանով թևավոր առյուծի արձանիկը<sup>29</sup>: Վերնաշապիկը կարճաթև է, ունի անկյունաձև ասեղնագործված ցածրադիր օձիք: Մարդատյուժը կրում է կիսալուսնաձև կախիկ: Աջ ուսին գործված է ինը ծաղկաթերթերից կաղմված վարդյակ: Ձախ ուսով անցնում է լայն, խորանարդազարդ լանջագոտի (աղ. 1, 6): Նման վերնաշապիկ է պատկերված Վանում գտնված բրոնզե արձանիկի վրա<sup>30</sup>, որն ունի նաև կարճաթևք, մինչև կրունկները հասնող և իրանի մասում փոքր-ինչ նեղացող ուղիղ կտրվածքի բաճկոն: Օձիքը բարձրադիր է և հիշեցնում է նախորդին, աջ թևին երևում է մի վարդյակ, իսկ պարանոցից կախված է կիսալուսնաձև կախիկ: Վերջին երկու արձանիկների հագուստների քննությունը ցույց է տալիս, որ ուրարտացիք կարճ թևքերով վերնաշապիկի վրայից հագել են նաև լանջագոտու ուղղությամբ թևք կտրված բաճկոններ, աջ ուսը և կրծքի մի մասը թողնելով բաց: Վերնաշապիկները կարվել են նուրբ, իսկ բաճկոնները՝ խավոտ կտորից:

Տ ա բ ա տ ն ե ր.—Տաբատավոր աստվածության միայն մեկ պատկեր է հայտնի: Խոսքը Մյունխենի թանգարանում պահվող ձիու փորքաշի զարդ հանդիսացող բրոնզե թիթեղին պատկերված նետածիգի մասին է<sup>31</sup>, որն ունի բաց փեշերով երկար թիկնոց և ծնկները ծածկող շալվար (աղ. III, 1):

Չ գ ե ս տ ն ե ր.—Մեզ են հասել ուրարտական զգեստի բազմաթիվ պատկերներ: Հետաքրքիր նմուշ է Թոփրակկալեի հանրահայտ կախիկին դրվագված Խալդիի շորը<sup>32</sup>: Խալդին պատկերված է գահին նստած. նրան է մոտենում այծի նղջուրներից բռնած մի կին: Տղամարդու զգեստը կարճ թևքերով է և երկար, մինչև կրունկները հասնող եղենազարդ փեշերով (աղ. III, 5): Մյունխենի թանգարանի թիթեղներից մեկին պատկերված է աստվածների երկշարք երթ<sup>33</sup>: Այստեղ նրանք կրում են սեղմիրանված, երկարափեշ, մինչև դաստակները

<sup>28</sup> Տե՛ս H.-J. Kellner, *սշվ. աշխ.*, էջ 57, նկ. 53:

<sup>29</sup> Б. Б. Пиотровский, Ванское царство, էջ 173, նկ. 34:

<sup>30</sup> Б. Б. Пиотровский, История и культура Урарту, էջ 119, նկ. 17:

<sup>31</sup> Ugartu, *աղ. 9*:

<sup>32</sup> Б. Б. Пиотровский, Ванское царство, էջ 226, նկ. 72: Ընդունված կարծիք է, որ սույն թախտմանի վրա պատկերված է Արուրանին: Սակայն այն հանգամանքը, որ գահին նստած աստվածությունն ունի աստծուն բնորոշ գլխազարդ և որ նրան այծ (ուլ) է մատուցվում (ուլեր զոհաբերվում էին միայն Խալդի աստվածությանը), ենթադրել է տալիս, որ գահին բազմածը Խալդին է (տե՛ս «Ուրարտական աստվածությունների և նրանց պաշտամունքային կենտրոնների մասին», «Աշխատություններ ՀՊՊԹ», 6, Երևան, 1975, էջ 5; L. N. Bjačová, Über die Natur des Gottes Haldi und der Göttin Arubani—Bagbartu, „Oikumene“, 2, Budapest, 1978, էջ 150—151:

<sup>33</sup> P. Calmeyer, *սշվ. աշխ.*, էջ 48, նկ. 39:



հասնող թևքերով, վարդյակազարդ լայն ու ձիգ դոտիններով շորեր: Մեկ այլ թիթեղի վրա դրվագված երեք էակներն<sup>34</sup> ունեն փոքր-ինչ այլ ձևվածքի հագուստներ: Նրանցից առաջինը կրում է կարճաթևք, մինչև կրունկները հասնող զգեստ, որը իրանի մոտ սեղմ է և դեպի վար աստիճանաբար լայնանալով՝ վերածվում է փեշի: Կլոր օձիքը և ուսերը զարդարված են կարճ գծերով, իսկ փեշը՝ ծոպերով: Մյուս երկուսի հագուստները նման են առաջինին, միայն թե կետազարդերի փոխարեն կրում են կետ-օղակներ: Զգեստի մի այլ ձև է փորագրված Կարմիր բլուրից հայտնաբերված շքատուփի վրա, որտեղ պատկերված են թռչնազուխ թևավոր արարածներ<sup>35</sup>: Նրանք կրում են կարճ թևքերով, խորանարդիկներով զարդարված շորեր՝ ծոպազարդ փեշերով: Զգեստի մեկ այլ օրինակ է պատկերված Կարմիր բլուրից գտնված բրոնզե մի թիթեղի վրա<sup>36</sup>. դրվագված է տղամարդ (զուխը կոտրված է), որն ունի դեպի ներքև լայնացող վերնաշապիկի տակից հագած ծալազարդ փեշով զգեստ: Զգեստի ծնկամասով անցնում է երիզն ընդգծող երկու շար թակալակար (աղ. III, 9):

**Թիկնոցներ** (անթևոցիկներ).— Ուրարտական աստվածները գրեթե միշտ պատկերված են թիկնոցներով: Սերբարթեփեից գտնված թիթեղներից մեկին դրվագված հալդին<sup>37</sup> կրում է երկար, լայն բացված ծոպազարդ եզրերով թիկնոց. նույն վայրից գտնված մեկ այլ թիթեղի վրա<sup>38</sup> ծոպազարդ է իսալդիի շղարշե թիկնոցի փեշը, իսկ եզրերը զարդարված են գծիկներով ու եղևնանախշով (աղ. I, 4): Նման զգեստի հետաքրքիր օրինակներ են պատկերված Արծկեի բարձրաբանդակին: Այստեղ հալդին և Թեյշեբան կարճ վերնաշապիկների վրայից կրում են երկար, մինչև կրունկները ձգվող թիկնոցներ, որոնց թևքերը հասնում են արմունկներին և ավարտվում բազկապատերով: Զգեստը հարդարված է խորանարդիկներով, վարդյակներով ու ծաղկաթերթեր շիշեցնող զարդանախշով: Այդպիսի զգեստով են պատկերված նաև Ադանայի գավառական թանգարանի գոտիններից մեկին դրվագված, ցուլերի վրա կանգնած աստվածությունները<sup>39</sup> (աղ. III, 4, 6):

Հետաքրքիր օրինակ է նաև արդեն հիշատակված ձիու փոքաշին պատկերված նետաձիգի թիկնոցը: Այն վերևի մասում ամուր կոճկված է, իսկ փեշերը, որ հասնում են մինչև կրունկները, բաց են (աղ. III, 1):

Կարմիր բլուրի շքատուփին փորագրված ոգիները պատկերված են անթևոցիկներով, որոնց թևք փեշերը հասնում են մինչև կոնքերը: Հագուստը հարդարված է խորանարդիկներով ու կարճ գծիկներով:

**Գլխարկներ**.— Հայտնի են տղամարդկանց պատկերներից (գիտենք միայն մեկ բացառությամբ): Հիմնականում դրանք իրար նման են: Ստորև կներկայացնենք այդ գլխարկներից մի քանիսը: Կարմիր բլուրից հայտնաբերված վերոհիշյալ գոտու վրա հալդին կրում է բարձր, տափակ գագաթով գլխարկ, որը ծածկում է ճակատը և ծոծրակը (աղ. II, 5): Մի այլ դեպքում (էրեբունիի որմնանկարներում) հալդին պատկերված է հարթ գագաթով

<sup>34</sup> H.-J. Kellner, Նշվ. աշխ., էջ 57, նկ. 55:

<sup>35</sup> Б. Б. Пиотровский, Искусство Урарту, էջ 102, նկ. 66:

<sup>36</sup> Б. Б. Пиотровский, Искусство и культура Урарту, Ереван, 1944, նկ. 52:

<sup>37</sup> H.-J. Kellner, Նշվ. աշխ., էջ 55, նկ. 49:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 57, նկ. 54:

<sup>39</sup> O. A. Taşyurek, The urartian belts in the Adana regional museum, Ankara, 1975, նկ. 19, 20:





Աղ. 111



եղջյուրակիր գլխարկով<sup>40</sup>, որը կարմրագույն է և զարդարված է լայն, կապույտ շերտերով: Գլխարկների հետաքրքիր նմուշներ են պատկերված Սերբարթեֆեի բրոնզե թիթեղներին: Դրանք ձևավորմամբ իրարից տարբերվող, հիմնականում եղջյուրակիր գլխարկներ են, որոնցից մեկի կենտրոնում դեպի վեր են հասնում երեք գնդաձև ելուստներ<sup>41</sup>, իսկ եզրերը զարդարված են թեք գծերով: Մյուս գլխարկը գագաթին ունի մեկ ելուստ և զարդարված է կետազարդերով: Երրորդը նույնպես գնդաձև ելուստով է, սակայն բացակայում են եղջյուրները, իսկ եզրերը զարդարված են եղևնազարդ նախշով<sup>42</sup>: Եղջյուրակիր գլխարկներով են պատկերված նաև Խալդին և Թեյշեբան Արծկեի բարձրաբանդակում: Սրանց գլխարկների գագաթներին երկու գնդաձև ելուստների վրա նկատվում են վեցթևանի աստղերից կազմված կլոր սկավառակներ: Եզրերը զարդարված են հորիզոնական գծերով և շրջանակներով (աղ. II, 6, 7):

Զինվորականության հագուստը: Հետևակայինի զգեստը.— ուրարտական զինվորականի հանդերձանքի ամենավաղ օրինակները հայտնի են Բալավաթյան դարպասների պատկերազարդումներից, որոնց վրա պատկերված ուրարտական Արամե թագավորի մարտիկները կրում են կարճաթևք, լայն գոտիով, մինչև ծնկները հասնող վերնաշապիկներ ու զարգմնակավոր սաղավարտներ<sup>43</sup> (աղ. III, 2): Կարճ վերնաշապիկներով են նաև Մյունխենի թանգարանում պահվող գոտիներից մեկի<sup>44</sup> վրա պատկերված հեծյալները: Սակայն այստեղ վերնաշապիկները գոտկատեղում խիստ նեղանում են:

Նոր Արեշում գտնված գոտու<sup>45</sup> վրա զինվորներն ունեն ավելի երկար, ազատ ձևվածքի կարճաթևք վերնաշապիկներ, որոնք ծածկում են ծնկները: Փեշերը զարդարված են ծոպերով: Նման վերնաշապիկներով են Արգիշթի I-ի արձանագրության մեջ բրոնզե մի թիթեղի վրա պատկերված մարտիկները<sup>46</sup>: Տարբերությունն այն է, որ վերջիններիս հագուստը գոտկատեղի մոտ նեղանում է և օձիքն ունի փոքր կտրվածք:

Էրեբունիի Խալդիի տաճարում պահպանված՝ զինվորների արշավանքը ներկայացնող որմնանկարներում<sup>47</sup> պատկերված են կարճ, մինչև ծնկները հասնող, գոտեկապերով սեղմված վերնաշապիկներ, որոնց տակից գծագրվում են շալվարները:

Հեծելազորայինի զգեստը որոշ չափով տարբերվում է հետևակայինի հագուստից. նոր Արեշի գոտու վրա հեծյալներն ունեն երկար, մինչև կրունկները հասնող, կարճ թևքերով ու ծոպազարդ քղանցատուտերով բաճկոններ:

40 Կ. Լ. Հովհաննիսյան, Էրեբունիի որմնանկարները, աղ. 46:

41 Ռ. Գ. Բարնետի կարծիքով նման ելուստները կարող են և հիերոգլիֆ նշաններ լինել (տե՛ս R. D. Barnett, The hieroglyphic writings of Urartu. Anatolian Studies presented to Hans Gustav Guterbock on the occasion of his 65th birthday, Istanbul, 1974, էջ 44, ծան.):

42 H.-J. Kellner, նշվ. աշխ., էջ 56, նկ. 47, 49, 57, նկ. 52:

43 Б. Б. Пиотровский, История и культура Урарту, էջ 52—55, նկ. 5—8; С. М. Бациева, Борьба между Ассирией и Урарту за Сирию, ВДН, 1953, 2, էջ 27:

44 P. Calmeyer, նշվ. աշխ., էջ 45, նկ. 35:

45 Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Հ. Մնացականյան, Նոր Արեշի ուրարտական կոլումբարին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1958, № 10, էջ 76, աղ. 5:

46 Urartu, աղ. 7:

47 Կ. Լ. Հովհաննիսյան, Էրեբունիի որմնանկարները, աղ. 50:



Նման հագուստներ են կրում Արգիշթի I և Սարգուրի II արքաների սաղա-  
վարտներին պատկերված հեծյալները<sup>48</sup>, սակայն առանց ծոպազարդման  
(աղ. III, 8): Հեծյալների պատկերներ հայտնի են նաև Ադանայի գավառա-  
կան թանգարանում պահվող գոտիներից, որոնցից մեկին<sup>49</sup> (ճարմանդին) դըր-  
վագված է հեծյալ, մեզ հայտնի հեծելազորայիններին ոչ բնորոշ լայն գոտիով  
ձգված, ծոպազարդ փեշերով կարճ վերնաշապիկով (աղ. II, 8):

**Պալատականի զգեստը.**—Ուրարտական ազնվականության հագուստի մա-  
սին կարելի է պատկերացում կազմել Նինվեի Աշուրբանապալի պալատի  
բարձրաբանդակներից մեկին պատկերված երկու դեսպանների հագուստնե-  
րից<sup>50</sup>: Դրանք թեք գծերով երիզված կարճաթևք, երկար թիկնոցներով են, ո-  
րոնց տակից պարզորոշ երևում են երկար, ծոպերիզված բաճկոններ: Ունեն  
կիսակլոր, ծոպավոր, փափուկ թաղիքե գլխարկներ:

Թոփրակակալից գտնված իշխանավորի ոսկրե արձանիկը<sup>51</sup> քանդակված  
է կարճ վերնաշապիկով և երկար, ուղիղ կտրվածքի հրկարափեշ հագուստով<sup>52</sup>,  
որն ավարտվում է զուգահեռ գծերի մեջ առնված շրջանակներով և ծոպերով:  
Վերնաշապիկը ձգված է գոտիով, կարճ թևքերն ունեն լայն բազկապատեր, ո-  
րոնք հարդարված են քառաշար գծերով: Չախ ուսի վրայով անցնում է լայն  
լանջագոտի: Վերնաշապիկը զուլավոր է և գործված է բրդից (աղ. II, 4):

**Քուրմի զգեստը.**— էրեբունիի մեծ դահլիճի որմնանկարներից մեկում  
պատկերված է տեսարան, ուր քուրմը քշում է ղոհաբերման ցուլերին<sup>53</sup>: Ուրմ-  
նանկարը վատ է պահպանվել, սակայն նկատվում է կարճ, թեք եզրերով ու  
լայն գոտիով բաճկոնը, որի ծոպազարդ քղանցքի տակից գծագրվում է գուլ-  
պաների մեջ առնված շալվարը: Ուսերին կարծես թե գցված է մորթե վերնա-  
զգեստը, որը հիշեցնում է Բարնետի հրատարակած թիթեղներից մեկին պատ-  
կերված քուրմի թիկնոցը<sup>54</sup>:

**Ուսուրդի զգեստը.**— էրեբունիի պալատի մեծ դահլիճի որմնանկարնե-  
րից մեկում պահպանվել է նաև ուսուրդի մի պատկեր<sup>55</sup>: Նա կրում է կարճա-  
թևք բաճկոն կամ վերնաշապիկ (մարմնի ստորին մասը չի պահպանվել), օ-  
ձիքն ունի լայն, անկյունաձև բացվածք: Գլխին կրում է ուսերը ծածկող գրլ-  
խարկ՝ ճակատակալով:

**Ուրարտուհու զգեստը.**— Հայտնի է, թերևս, միայն աստվածուհիների  
պատկերներից: Սակայն ուրարտական աստվածուհու և ուրարտուհու հա-  
գուստների միջև եղած տարբերությունը, հավանաբար, էական չէր: Վանում  
գտնված աստվածուհու արձանիկը<sup>56</sup> կրում է արմունկներին հասնող թևքերով

48 Б. Б. Пиотровский, Кармир-блур, 1, էջ 64, նկ. 40: Ն ու յ ն ի՝ Кармир-  
блур, 2, նկ. 21:

49 О. А. Таşууегк, նշվ. աշխ., նկ. 7: Այս հեղինակի կարծիքով ճարմանդին  
պատկերված հեծյալը կարող է և աստվածուհու լինել:

50 Б. Б. Пиотровский, Искусство Урарту, էջ 40, նկ. 9:

51 Б. Б. Пиотровский, Ванское царство, աղ. 11:

52 Նման զգեստով է և Արմավիրի (Արգիշթիխինի) որմնանկարներից մեկին պատկեր-  
ված ոգին, որն ունի բաց գույնի, մինչև կոնքերը հասնող վերնաշապիկ և մուգ երկարափեշ  
հագուստ:

53 Կ. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, էրեբունիի որմնանկարները, աղ. 17:

54 R. D. Barnett, նշվ. աշխ., նկ. 11:

55 Կ. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, էրեբունիի որմնանկարները, աղ. 34:

56 Б. Б. Пиотровский, Ванское царство, էջ 183, նկ. 46:



և երկար, մինչև կրունկներն իջնող զգեստ՝ ոչ մեծ, կլոր կտրված օձիքով: Կուրծքը զարդարված է ուլունքաշարով և խաչով: Զգեստի վերնամասը հարդարված է երկու զուգահեռ աղեղնաձև թակալակարով, իսկ ամբողջութիամբ՝ գծազարդ խորանարդիկներով: Ունի գոտի և մինչև կոնքերն իջնող գրլխաշոր (աղ. I, 3):

Թոփրակկալեից գտնված ոսկե մեղալիոնի վրա պատկերված են երկու կին<sup>57</sup>, որոնցից մեկը նստած է գահին, իսկ մյուսը կանգնած է նրա առջև, ունեն վերը նկարագրվածին նման հագուստներ: Տարբերությունն այն է, որ կանգնած կնոջ զգեստը ամբողջությամբ ծածկում է ոտքերը և ավարտվում է փոքրիկ քղանցատուտով (աղ. I, 2): Իր ձևով այն հիշեցնում է Թոփրակկալեից գտնված բրոնզե կախիկի վրա պատկերված աստվածուհու հագուստը (աղ. III, 5), միայն թե գլխաշորն այստեղ ավելի երկար է և կրկնում է զգեստի գիծը:

Սերբարթեփեի բրոնզե թիթեղներից մեկին պատկերված դիցուհին<sup>58</sup> ունի ուղիղ կտրվածքի, երկար, մինչև կրունկները հասնող կարճաթևք զգեստ: Պարանոցին կրում է ուլունքաշար, ուսընդանուր՝ լայն լանջագոտի: Գլխի ծածկոցը իջնում է մինչև կրունկները՝ տարածվելով որպես քղանցատուտ: Մեկ այլ թիթեղի վրա դրվագված աստվածուհին<sup>59</sup> նույնպես պատկերված է ազատ կտրրվածքի, կարճաթևք զգեստով: Սակայն զգեստի թևքերը ուսերի վրա լայն են, իսկ արմունկների մոտ՝ նեղ: Իրանի մասը զարդարված է երկար գծերով, փեշը՝ ծոպերով, իսկ թևքերի եզրերը՝ կետազարդերով: Աստվածուհին կրում է երկար, մինչև կրունկները հասնող ծածկոց: Ուշագրավ է վերոհիշյալ թիթեղներից<sup>60</sup> մեկի վրա պատկերված մի այլ դիցուհու հագուստը: Այն լայնափեշ է, հասնում է մինչև աստվածուհու ծնկները: Թևքերը երկար են, ծածկում են նաև արմունկները: Զգեստն ունի գոտի և ամբողջովին կետազարդ է: Կետազարդով են ընդգծված նաև ստիկները: Նա կրում է թիկնոց, որ յուրահատուկ է միայն այս կնոջ պատկերին:

Ուրարտական կրոնում թերևս առկա էր նաև «Մերկ դիցուհու» պաշտամունքը: Այդ աստվածուհու ոսկրե նրբագեղ արձանիկը (գտնվել է Թոփրակկալեում) կրում է միայն վարդյակներով զարդարված թասակ և բազմաշար մի մանյակ<sup>61</sup> (աղ. III, 3):

Այսպիսով, ուրարտական հագուստը հայտնի է հիմնականում աստվածությունների, զինվորների և հասարակության վերնախավի զգեստների օրինակներով: Սակայն նույնիսկ աստվածությունների հագուստների քննության ժամանակ նկատվում է տարբերություն՝ կան զգեստներ, որոնք, ինչպես վերնասվեց, բնորոշ են միայն ավագ աստվածություններին:

Զինվորականության հանդերձանքի առանձնահատկությունն է սաղավարտի և զրահի առկայությունը<sup>62</sup>: Քրմության համար սովորական էին, թերևս,

57 նույն տեղում, էջ 182, նկ. 45:

58 H.-J. Kellner, նշվ. աշխ., էջ 55, նկ. 49:

59 նույն տեղում, էջ 58, նկ. 56:

60 նույն տեղում, նկ. 57:

61 Б. Б. Пиотровский, Ванское царство, աղ. LI:

62 Սաղավարտների ու զրահների մասին մեր պատկերացումը հիմնված է ինչպես պատկերների, այնպես էլ բնօրինակ նյութի վրա: Հնագիտական աշխատանքների ժամանակ գտնվել



մորթե թիկնոցները (մեզ հայտնի է քրմի երկու պատկեր. երկուսում էլ նրանք կրում են ուսերին զցված մորթիներ): Ուրարտական արքայի պատկեր մեզ հայտնի չէ: Կտրելի է ենթադրել, որ նրանք օգտագործել են աստվածությունների զգեստը հիշեցնող հագուստներ ու նկարագրվածների նման զինվորական հանդերձանք: Մանկան միայն մեկ պատկեր է հայտնի. Ռ. Դ. Բարնետի արդեն հիշատակված հոգվածում հրատարակված թիթեղին, ի թիվս այլոց, պատկերված է և մի մանուկ, որի հանդերձն իր երկար պատմուճսնով չի սարքերվում վերը քննարկված շորերից:

Ուրարտացիները իրենց զգեստները կարել էր վուշե և բրդե թելերից գործած կտորներից: Այս մասին վկայվում է Սարգոն II-ի ուրարտական արշավանքի մասին պատմող արձանագրությունում: Բացի այդ, բրդե թելեր ու գործվածքներ հայտնի են Կարմիր բլուրի պեղումներից:

Ուրարտում, թերևս, այլևայլ զոհաբերությունների հետ մեկտեղ, աստվածություններին մատուցվում էին նաև հագուստներ: Միևնույն ժամանակ հայտնի է, որ Ուրարտայի պալատում պահվում էին շորեր, որոնք կարող էին նախատեսված լինել նաև պարզեցների համար, քանի որ հագուստը արևելքում երբեմն տրվում էր նաև որպես վարձ՝ ծառայության դիմաց<sup>63</sup>:

#### УРАРТСКАЯ ОДЕЖДА

Доктор историч. наук С. А. ЕСАЯН, С. Г. АМАЯКЯН

(Резюме)

Урартская одежда известна по изображениям и по данным письменных источников. Одежду урарты шили из шерстяных и льняных тканей, применялись также меха. Мужская одежда состояла из различных кафтанов, рубах, штанов, плащей и накидок. Весьма разнообразны головные уборы. Женская одежда состояла в основном из длиннополого платья, иногда снабженного шлейфом. Обязательным атрибутом была накидка, покрывающая голову и доходящая до талии или до пят. Имеется одежда, характерная лишь для определенной социальной прослойки. Так, для жречества, по-видимому, были характерны меховые накидки. Различия наблюдаются также в одежде богов и гениев.

են բազմաթիվ սաղավարտներ ու ավելի սակավ՝ զրահների բեկորներ (տե՛ս Բ. Բ. Плотровский, Кармир-блур, 3, էջ 24, 31): Զինվորական հանդերձանքի ու նրա կրած փոփոխությունների մասին ավելի հանգամանալից տե՛ս Ս. Մ. Бацнева, նշվ. աշխ., էջ 27:

<sup>63</sup> Բարելոնում նման երևույթի գոյությունը մասին տե՛ս Զ. Կ. Брандт, Путешествие в древний Вавилон, М., 1979, էջ 139: